ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԿԱՄ ՎՆԱՍԱԶԵՐԾՄԱՆ ԿԱՄ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԱՄ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

2010թ. հոկտեմբերի 27-ին կայացած նիստում «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման կամ վնասազերծման կամ պահպանման կամ փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման» միջգերատեսչական հանձնաժողովը քննարկել է բժշկական թափոնների այրման համար լիցենզիա ստանալու նպատակով «Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից ներկայացված հայտը և հետևյալ փաստաթղթերը.

1. «Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ-ի կանոնադրության պատճեն
2. իրավաբանական անձի պետական գրանցման վկայականի պատճեն
3. պետական տուրքի վճարման անդորրագրի պատճեն
4. տեղեկություններ մասնագետի մասնագիտական պատրաստվածության մասին
5. տեղեկանք համապատասխան տարածքային հարկային տեսչությունից՝ հաշվառման մեջ լինելու մասին
6. տեղեկություններ անգլիական արտադրության թափոնների այրման վառարանի վերաբերյալ, որը նախատեսվում է տեղադրել «Մուրացան» համալսարանական հիվանդանոցի տարածքում:

Միջգերատեսչական հանձնաժողովին ներկայացվել են և առաջարկություններ, մասնավորապես՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացությունը, բժշկական թափոնների այրման գործընթացի նկարագիրը, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 15-ի N 1716-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության 05.08.2010թ. N 967-Ն որոշումը:

Հաշվի առնելով, որ նախատեսվող գործունեությունը կնպաստի վտանգավոր թափոնների հեռացման հետ կապված հիմնախնդիրների լուծմանը, ինչպես նաև շրջակա միջավայրի վրա ազդեցության դրական փորձաքննական եզրակացության առկայությունը և ներկայացված փաստաթղթերի լիակազմությունը՝ միջգերատեսչական հանձնաժողովն առաջարկեց նշված կազմակերպությանը տրամադրել լիցենզիա՝ բժշկական թափոնների վնասազերծում իրականացնելու համար:

Ա. Հարությունյան	Մ. Քամալյան
Ա. Ալեքսանդրյան	Ա. Կարապետյան
Ս. Գալստյան	Ա. Սարոյան
Ա. Պետիկյան	Ա. Մարտիրոսյան
Կ. Կարապետյան	Ի. Հակոբյան
Հ. Միրզոյան	